# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

## ՈՐՈՇՈՒՄ

<<18>> Նոյեմբերի 2014թ. N 225

ք. Արմավիր

### ՀԱՅԿԱԿԱՆ ԱՏՈՄԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆԻ ՎԹԱՐԻ ՍՊԱՌՆԱԼԻՔԻ ԴԵՊՔՈՒՄ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԱԶԴԱՐԱՐՄԱՆ ԵՎ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀՐԱՏԱՊ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 22-ի N 2328-Ն որոշման 7-րդ կետի 19-րդ ենթակետի պահանջներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի արտակարգ իրավիճակների հանձնաժողովի 2014 թվականի նոյեմբերի 18-ի N 1 որոշումը՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի բնակչության պաշտպանության համակարգում պլանային միջոցառումներ անցկացնելու նպատակով.

**ո ր ո շ ու մ եմ՝**

1. Գործողության մեջ դնել «ՀՀ Արմավիրի մարզային արտակարգ իրավիճակների հանձնաժողովի ՀԱԷԿ-ի վթարային հակազդման պլանը»:

2. Մարզային փրկարարական վարչության պետ Ա.Ամիջանյանին՝

1) իրականացնել ՇՊՄՊ գոտու համայնքների բնակչության ազդարարումը.

2) կազմակերպել կապի և ազդարարման համակարգի հետագա անխափան գործունեության ապահովումը.

3) մինչև ՀՀ ԱԻՆ ՓԾ ճառագայթային մոնիթորինգի խմբերի ժամանումը, ճառագայթային հսկողության ապահովման նպատակով, վարչության ճառագայթային հետախուզության խմբի ուժերով իրականացնել ճառագայթային հետախուզություն՝ ՆՊՄԻ գոտու սահմանագծի նախանշված ուղղությամբ.

4) կազմակերպել Բաղրամյանի և Վաղարշապատի հրշեջ-փրկարարական ջոկատների նախապատրաստումը՝ համահավաք հակահրդեհային ջոկատներ ծավալելու նպատակով:

3. ՀԱԷԿ-ին հարակից ՆՊՄԻ գոտու համայնքների, ձեռնարկությունների, կազմակերպությունների ղեկավարներին՝

1) անհապաղ անցնել բնակչության և անձնակազմի պաշտպանության միջոցառումների իրականացմանը (ԱՊՄ բաշխում, պատսպարում, վահանաձև գեղձի արգելափակում).

2) կազմակերպել տարահանման հանձնաժողովների ծավալումը, ճշգրտել բնակչության և անձնակազմերի տարահանման հաշվարկները, կազմակերպել տարահանման տրանսպորտային միջոցներով ապահովումը:

4. ՇՊՄՊ գոտու համայնքների, ձեռնարկությունների, կազմակերպությունների ղեկավարներին՝

1) անհապաղ անցնել ուժեղացված աշխատանքային ռեժիմի.

2) սահմանել ղեկավար կազմի շուրջօրյա հերթապահություն.

3) կազմակերպել պաշտպանված կառավարման կետերի նախապատրաստումը, կապի անհրաժեշտ միջոցներով ապահովումը.

4) վթարային հակազդման ուժերը բերել պատրաստականության.

5) կազմակերպել անձնակազմերի և բնակչության ազդարարման ապահովումը՝ բոլոր հնարավոր միջոցներով և ուժերով.

6)կազմակերպել բոլոր տեսակի պաշտպանական կառույցների հարմարեցումը հակաճառագայթային թաքստոցների.

7) կազմակերպել տարահանման հանձնաժողովների ծավալումը, ճշգրտել բնակչության և անձնակազմերի տարահանման հաշվարկները, կազմակերպել տարահանման տրանսպորտային միջոցներով ապահովումը:

5. Բոլոր ծառայությունների ղեկավարներին՝

1) գործողության մեջ դնել ծառայության ՀԱԷԿ-ի վթարի դեպքում գործելու պլանները.

2)կազմակերպել ծառայության անձնակազմի, ենթակա վթարային հակազդման կազմակերպությունների ղեկավարների և հակազդող ուժերի ազդարարումը.

3) կազմակերպել անձնակազմերի և ուժերի ճառագայթային պաշտպանության ապահովումը և ուժերի պատրաստականության բերումը:

5.1. Կապի և ազդարարման ծառայության պետ Թ.Ասլանյանին՝

ա. կազմակերպել անհրաժեշտ լրացուցիչ կապի միջոցների ձեռքբերումն ու կապուղիների ապահովումը.

բ. ապահովել ազդարարման ավտոմատ համակարգերի անխափան գործունեությունը:

5.2. Բժշկական ծառայության պետ Լ.Մուրադյանին՝ կազմակերպել տուժած բնակչության բժշկական օգնության անհրաժեշտ դեղամիջոցների ստացումը, նախապատրաստվել տարահանման հավաքակետերում և միջանկյալ կետերում բժշկական ապահովման իրականացմանը:

5.3. Ինժեներական ծառայության պետ Կ.Դանիելյանին՝ ցուցաբերել մասնակցություն բնակչության պատսպարման համար պիտանի պաշտպանական կառույցների, նկուղային հարկերի հարմարեցմանը, դրանց պատրաստի վիճակի բերմանը:

5.4. Տրանսպորտային ծառայության պետ Հ.Կուրղինյանին՝ ճշտել ՆՊՄԻ գոտու բնակավայրերի բնակչության տարահանմանը ներգրավվող տրանսպորտային սարքին միջոցների քանակը, նախապատրաստել լրացուցիչ տրանսպորտային միջոցներ (մարդատար, բեռնատար) տարահանման, տուժածների և հիվանդների տեղափոխման, տարահանվածների գույքի և նյութական արժեքների տեղափոխման, գյուղատնտեսական արտադրանքի պաշարների դուրսբերման նպատակով:

5.5. Բույսերի և կենդանիների պաշտպանության ծառայության պետ Ա.Այվազյանին՝ կազմակերպել ռադիոակտիվ աղտոտված գոտուց գյուղատնտեսական կենդանիների և արտադրանքի պաշարների դուրսբերման ուժերի և միջոցների պատրաստականության բերումը:

5.6. Հասարակական կարգի պահպահման ծառայության պետ Ա.Այվազյանին՝

ա. պատրաստականության բերել վթարային հակազդման ուժերն ու միջոցները՝ բնակչության տարահանման հավաքակետերում, տրանսպորտային երթուղիներում և ռադիոակտիվ աղտոտված գոտում գտնվող բնակավայրերում հասարակական կարգի պահպանության, ինչպես նաև այդ բնակավայրերում գույքի և նյութական արժեքների պահպանման կազմակերպման, անցագրային ռեժիմի և պարետային ծառայության կազմակերպման նպատակով.

բ. նախապատրաստել վերակարգեր՝ անհրաժեշտության դեպքում բնակչության ազդարարման գործընթացին մասնակցելու նպատակով:

5.7. Կոմունալ-տեխնիկական ծառայության պետ Գ.Ղազարյանին՝

ա. կազմակերպել կապտաժների և օրվա կարգավորիչ ջրամբարների հերմետիկացումը.

բ. նախապատրաստել ուժեր և միջոցներ տարահանման միջանկյալ հավաքակայաններում սանիտարական մշակման և տեխնիկայի ապաակտիվացման կետերը ջրով ապահովելու նպատակով.

գ.ձեռնարկել միջոցառումներ տուժած բնակչությանը տեղաբաշխման վայրերում կենսաապահովման կազմակերպման ուղղությամբ:

5.8. Առևտրի և սննդի, նյութատեխնիկական մատակարարման ծառայության պետ Վ.Մկրտչյանին՝

ա. կազմակերպել վթարային գոտիների տարահանման տրանսպորտային միջոցների համար անհրաժեշտ վառելիքաքսուկային նյութերի ձեռքբերման և համայնքներ փոխադրման գործընթացը.

բ. ձեռնարկել միջոցառումներ տուժած բնակչությանը տեղաբաշխման վայրերում կենսաապահովման կազմակերպման ուղղությամբ:

6. Տարահանման մարզային հանձնաժողովի նախագահ Մ.Քարտաշյանին՝

1) գործողության մեջ դնել «ՀՀ Արմավիրի մարզի բնակչության տարահանման պլանը».

2) պատրաստականության բերել համայնքների տարահանման հանձնաժողովները, ճշտել հանձնաժողովների վարչակազմերի համալրվածությունը, անհրաժեշտության դեպքում դրանք համալրել.

3) նախապատրաստել տարահանման հանձնաժողովի աշխատանքային բոլոր փաստաթղթերը.

4) ստուգել կապը վթարային գոտու բոլոր համայնքների տարահանման մարմինների հետ:

7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Է.ՄՈՒՐԱԴՅԱՆ